

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՄԻՐՈՒ ՄՅԱՆ ԼԻԼԻ ՄԱՅԻՍԻ

**ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒ ՏԻԿՅԱՆԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼԵԶՈՒՆ**

**ժ. 02. 01 - <<Հայ ոց լ եզոլ>> մասնագիտությունը ամբ
բանասիրական գիտությունը ու ներքի թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսություն**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2017

Ատենախոսությունը թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունը ու ներքի դոկտոր,
պրոֆեսոր **Լ. Կ. Եզեկյան**

Պաշտոնական
գիտություններ

ընդդիմախոսներ՝

բանասիրական

դոկտոր **Ռ. Մ. Թխմախյան**

բանասիրական գիտություններ
թեկնածու, դոցենտ **Ա. Վ. Գալստյան**

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան
պետական լեզվաիսկապական գիտական
համալսարան

Ատենախոսություն անցառնականությունը կկայանա 2017թ.
փետրվարի 27-ին՝ ժամը 15⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտում գործող ԲՈՅ-ի՝ Լեզվաբանություն 019
մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի
անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. հունվարի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

Բ. Գ. Թ., դոցենտ

Ն. Մ. Սիմոնյան

ԱՆԽԱՏԱՆԵԻ ԸՆԴՈՒՄ ԳԵՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շուրջ երկու տասնամյա հայ ոճագիտության մեջ
քննվել և գնահատվել է Ս. Կապուտիկյանի չափաճոյի
խոսքարվեստը¹, իսկ հուշագրության լեզուն չի ու-
սում մնասիրվել: Գրողի գրական ժառանգության բավականին
արժեքավոր մաս կազմող հուշագրական երկերի մասին գրվել

¹ **Ս. Հարությունյան**, Սիլվա Կապուտիկյանի չափաճոյի լեզուն և ոճը, Ե,
1992:

են միայն գրականագիտական ու - սու մնասիրություններ, հրատարակվել բազում հոդվածներ, նշվել գրողի խոսքարվեստին բնորոշ լեզվաճանաչական ինչ-ինչ ընդհանուր հատկանիշներ: Սրանով պայմանավորված՝ ուսումնասիրության նյութ ենք դարձրել Ս. Կապուտիկյանի հուշագրության լեզուն:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՅԱՆ ԱՇԱՐԿԱՆ, ՆԱԿԱՏԱԿՆ ՈՒ ԽՆՂԻՐՆԵՐԸ:

Ուսումնասիրության աշարկան Սիլվա Կապուտիկյանի՝ Սփյունք կատարած ուղևորությունների հենքի վրա գրված հուշագրություններն են՝ «Քարավանները դեռ քայլում են» (1964)², «Խճանկար հոգու և քարտեզի գույներից» (1976)³, «Գույներ նույն խճանկարից» (1989)⁴, «Հոգու նույն երթուղիներով» (1993) և «Քարավանները հեռա-նում են» (1999): Հետխորհրդային շրջանում գրված վերջին երկու հուշագրությունները 2002 թ. ամփոփվեցին նաև «Իմ կածանը աշխարհի ճանապարհներին» գրքում⁵:

Աշխատանքի նպատակն է համակարգված ներկայացնել հուշագրության լեզվաճանաչական յուրահատկությունները: Հարցը հնարավորինս համակողմանի ներկայացնելու նպատակով երբեմն նշվել են լեզվական տարբեր միավորների ճանկանորեն ու գեղագիտորեն չպատճառաբանված, անհաշու կիրառությունները:

Ատեսախոսության հիմնական խնդիրներն են՝ քննել բառապաշարի տարբեր շերտերի ճանկան արժեքը, դրանով պայմանավորված՝ գրողի բառը նտրության և բառագործածության վարպետությունը, քերականական իրողությունների լեզվաճանաչական կիրառությունները, գրողի խոսքարվեստի պատկերավորությունն ու արտահայտչականությունը պայմանավորող առավել տարածված միջոցները: Ուսումնասիրության խնդիրների շրջանակների մեջ է մտնում և՛ հեղինակի, և՛ հերոսների խոսքի լեզվաճանաչական յուրահատկությունների բացահայտումը:

Գիտական նորույթը: Առաջին անգամ փորձ է արվել քննել ու և գնահատել Ս. Կապուտիկյանի հուշագրության խոսքարվեստը, բացահայտել ու լեզվական այն իրողությունները, որոնք ամանձնահատուկ նշանակություն ունեն հուշագրության լեզվական արվեստի համապատկերում, պայմանավորում են

² Ս. Կապուտիկյան, Քարավանները դեռ քայլում են, Երկերի ժողովածու, 2 հատորով, հ. 2,

Ե., 1973 (այսու հետև՝ 1):

³ Ս. Կապուտիկյան, Խճանկար հոգու և քարտեզի գույներից, Երկեր, 3 հատորով, հ. 3, Ե.,

1985 (այսու հետև՝ 2):

⁴ Ս. Կապուտիկյան, Գույներ նույն խճանկարից, Ե., 1989 (այսու հետև՝ 4):

⁵ Ս. Կապուտիկյան, Իմ կածանը աշխարհի ճանապարհներին, Ե., 2002 (այսու հետև՝ 3):

բանաստեղծուհու լեզվամտածողության, խոսքի և ոճի ինքնատիպությանը: Կարծում ենք՝ քննվող լեզվաոճական միջոցների շրջանակով և ուսում մնասիրության հիմնական արդյունքով աշխատանքը կարելի է նորության ու ն համարել:

Ուսումնասիրության մեթոդը: Կիրառել ենք նկարագրական և վերլուծական մեթոդը, անհրաժեշտության դեպքում՝ դրանք համարել:

Ուսումնասիրության տեսական և գործնական արժեքը:

Աշխատանքը կարող է

հիմք լինել համամասն տեսանկյունով քննելու այլ հեղինակների խոսքարվեստը, նաև լեզվաոճական տարբեր իրողության ունենր: Այն օգտակար կարող է լինել ոճաբանական ուսումնասիրության ունենրի, գործնական պարապմունքների համար, կարող է տրամադրել փաստական հարուստ նյութ:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսությանը բաղկացած է ներածության և ից, երեք գլխից, եզրակացության և օգտագործված գրական նունքի ցանկից: Աշխատանքի ծավալը մեքենագիր 147 էջ է:

Ատենախոսությանը քննարկվել է երևանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնում և երաշխավորվել հրատարակային պաշտպանության: Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են գիտական ժողովածուներում հրատարակված հոդվածներում:

Ատենախոսության հիմնական բովանդակությանը:

Ներածական մեջ նշվում են Ս. Կապուտիկյանի հուշագրության ունենրի թեմատիկ և լեզվական յուրահատկության ունենրը: Ներկայացվում են այն հեղինակները, որոնք Ս. Կապուտիկյանի որևէ հուշագրության գրականագիտական վերլուծության մեջ գնահատել են նաև լեզուն՝ տալով միայն ընդհանուր բնորոշումներ: Հիմնավորվում են թեմայի ընտրությանը, ուսումնասիրության անհրաժեշտությանը, նպատակն ու խնդիրները:

Առաջին գլուխը վերնագրված է <<Բառապաշար>>: Գրողը ոճական երանգավորում է հաղորդել չեզոք բառաշարտի, հայոց գրական լեզվի հարուստ բառազանծին համարել է ժողովրդախոսական, բարբառային, արևմտահայերեն բառեր, օտարաբանության ունենր, հարկեղած դեպքում կերտել է նոր բառեր:

Համագործածական բառաշարտ: Գրողի խոսքարվեստում համագործածական որոշ բառերի արտահայտչականության հիմքում ժողովրդական-փոխաբերական գործածության ունեն է: Այսպիսի կիրառության ունենրը, սակայն, չեն նպաստում բովանդակային-գաղափարական ինչ-ինչ հարցերի լուծմանը: Սրանք պարզապես Կապուտիկյանի լեզվամտածողությանը բնորոշ չեզոք գործածության ունենր են և ասելիքին հաղորդում են ժողովրդական կենդանի խոսքի որոշ երանգներ. <<Կարպիսը վիրավորանքից կարմրեց ու ֆրանսերենով միլավ կարմրեցրեց

արջ - կան>> (4-35), <<Մի ... տղամարդ **տաքացած** խոսում էր>> (2-73) և այլն:

Համագործածական բառերը ոճական-արտահայտչական որոշակի երանգ են ստանում նաև գրողի կողմից բառային այդ միավորներին վերագրված փոխաբերական նոր իմաստների շնորհիվ: Օր.՝ Փարիզում Հայաստանի մասին գաղափար չուներող հայ գերիներից մեկի հետ հանդիպումը պեկոծում է գրողի ներ-աշխարհը, ծնում բանաստեղծություն, որի մասին հեղինակը գրում է. <<Այստեղ բանաստեղծական **բահը** արևերես է հանել ներաշխարհի հայու թյամբ շարափս ված նախանյութը, որպես բնագրական մի պատվաստում՝ սպասվելիք ամեն տեսակ խառնաշփոթության, պարպածության, ուղեմոլ որության դեմ>> (2-127):

Համագործածական բառերի անսովոր գուգորդումներում ընդգծվում են նաև Կապուտիկյան բանաստեղծուհու մտածողության գեղագիտական որակները: Այսպես՝ **ծղոս հարդ, ձյուն** բառերի փոխաբերական իմաստով գործածությունն - ներդրվար է հանդիպել: Մինչդեռ <<Խճանկար հոգու և քարտեզի գույներից>> հուշագրությունում՝ Շահան Նաթալիի հետ իր հանդիպման նկարագրության հատվածում, այդ բառերը դրսևորում են փոխաբերական իմաստներ, երևան հանում գրողի աշխարհընկալման ուրույն կողմերը. <<Շուրջը գրքերի կույտեր են, նամակներ, թղթեր, ձեռագրեր՝ անցած-գնացած կանաչ տարիների **ծղոսն** ու **հարդը**... Իսկ ինչե՛ր են մնացել հոգու **ձյունների** տակ...>> (2-277):

Կան նաև համագործածական բառերի այնպիսի գուգորդումներ, որոնք խաթարում են խոսքի գեղագիտական ընկալումն ու զգայական ներգործությունը. <<Ավտոմեքենաների **հոսք** մակաղել էր լայն շի փողոցում>> (4-247), <<... զգացի առաջադիմական <<կեսուր մայրիկի>> **առադի** տեսակը...>> (2-202):

Համագործածական բառերի ոճական արժեքը բացահայտելիս կարևորվում է նաև դրանց քննությունը **հոմանշային** և **հականշային** հարաբերության մեջ (հականիշ բառերին անդրադարձել ենք հակադրությունները քննելիս): Գրողը հոմանիշների (լեզվական և խոսքային) գործածությանն է դիմում որևէ հասկացությունը ընդգծելու, դրանով խոսքն առավել ազդեցիկ ու տպավորիչ դարձնելու, նաև առարկան համակողմանիորեն, բազմաբովանդակ ներկայացնելու նպատակներով: Օր.՝ <<<Ես էլ հայ եմ, Հայաստանից>>, - ասացի: **Չգիտեր, գաղափար չուներ**>> (2-127), <<Քաղաք, որը ... տեսել է **ցուրտ անկրակ** ու **անճրագ** ձմեռ-ներ>> (3-225):

Ժողովրդավտսակցական բառաբերու Հեղինակի խոսքը հարուստ է ժողովրդական կենդանի խոսքին բնորոշ բառային

միավորների (ժողովրդախոս- սակցական բառերի⁶, անվանական և բայական հարադրու թյուկների, կրկնավոր- ների) այնպիսի կիրառություններով, որոնք զուտ անվանողական արժեք ունեն և ոճական տեսակետից այնքան էլ չեն արժևորվում: Դրանք խոսքին սոսկ ժողովրդական երանգ են հաղորդում, շարադրանքը դարձնում պարզ, բնական ու անմիջական. <<... ինքն ու ամուսինն էլ՝ **քեֆչի** ու գվարճախոս Նշանիկը... >> (4-295), <<... ասես **շուկն-կենդանի** չկա>> (2-115), <<Սակայն ճանապարհին ուղե- կիցներս **մաքները փոխեցին**>> (1-356), <<... նպատակ ունեն պարզելու, թե գրպաններումս և իրերիս մեջ **ռումբ-մումբ** չկա...>> (2-101):

Սակավաթիվ ժողովրդախոսակցական բառեր ոճական որոշակի լիցք են ստա- նում փոխաբերական իմաստներով գործածվելու շնորհիվ. <<... ես էլ կունենամ իմ լուսանկարը սուրբ Մարկոսի հրապարակում՝ **<թաթալ աբազ>** աղավեսինե- րի աղմկոտ ընկերակցությամբ...>> (4-560), <<Օտար բարեկարգ դարոցի **համն առած** ծնողին և իր գավակին այլևս ետ չես բերի ու թոթովել տաս հայերենը>> (2-32), <<Սփյունքի ... **հանով-հոտով** մարդկանցից է Մալյանը>> (2-52):

Ժողովրդախոսակցական որոշ բառեր առավել ապես հասարակաբանություններ են և ընդգծում են գրողի բացասական վերաբերմունքը. <<... ի՞նչ է ասում այս **հաստադոշը**...>> (2-102), <<... նայելով այս **շշկլած** ... դեմքին...>> (2-371):

Ժողովրդախոսակցական բառերից հաճախդեպ են հատկապես - **ակ, -իկ** (**-լիկ**), **-ուկ և** **-(ա)վարի** ածանցներով կազմվածությունները: Դրանք խոսքին տալիս են մտերմիկ երանգ, շերմություն ու զգացմունքայնություն. <<Արդյոք այդպե՞ս են երգել ... այլուր փոխադրված մեր **որբուկները**, թե՞ շատ ավելի **դառնիկ** ու հու- սահատ>> (2-16), <<Նարդուհին առաջվա **տնավարի** կեցվածքը չուներ>> (1-26):

Կան խոսակցական, նաև ժարգոնային⁷ բառեր, որոնք ոճականորեն պատճառավորված չեն: Դրանք չունեն ոճական- արտահայտչական դրական երանգավորում, հասարակացնում են խոսքը, այն զրկում գեղարվեստականությունից: Օր.՝ <<... նրանք **<ինադու>** ընտրել էին դաշնակցականի>> (3-197), <<... **դեմ ա- րին** անգլերեն մի կոչ, թե ստորագրեք>> (2-136): Ժարգոնային որոշ բառերի գործածությունը թերևս ոճականորեն արդարացվում է բացասական հատկանիշ

⁶ Բառերը ժողովրդախոսակցական ենք համարել՝ հիմք ընդունելով **Էդ. Աղայանի** <<Արդի հայերենի բացատրական բառարան>>-ը, Ե., 1976 (այսուհետև՝ ԱՅԲԲ):

⁷ Չունշագրվածություններում հազվադեպ են ժարգոնային բառերի գործածությունները, եղած- ներն էլ չունեն ոճական էական արժեք, ուստի առանձին ենթազվ խոլ չենք ներկայացնում:

ընդգծելու դեպքում: Օր.՝ <<... Անդրանիկ Անդրեասյանի պես **անջատված** ... մի անձնավորություն>> (2-257):

Հուշագրության հերոսները գրողին ծանոթ, հարազատ մարդիկ են, որոնց հեղինակը դիմում է մտերմաբար: Նրանք նույնպես մտերիմի պես են ընդունում Կապուտիկյանին: Սրանով պայմանավորված՝ գրողը թերևս ոչ այնքան խոսքն անհատականացնելու, որքան փոխադարձ մտերմիկ, ջերմ ու բնական փոխհարաբերություններ ընդգծելու նպատակով է երբեմն օգտվում այս բառաշերտից իր՝ իբրև հերոսի, նաև այլ հերոսների, օրինակ, գյուղաբնակ ուսուցչուհի Ալմաստի խոսքը կառուցելիս (եթե նկատի ունենանք բնական լայն վայրը, տիպակա՝ նացման համար գրողը թերևս հերոսուհու խոսքը ոճավորելու բարբառային բառերով): <<- **Տևա՛ շեններ, հազար տարվազ ու խժարիզ** եկանք, որ դու մա՞ ու՛ տենք, - բողոքում եմ ես>> (1-15), <<- Տղաներիս **արևով եմ երդվում, ասված էլ իջներ երկնքից**, ես այդպես չեի ուրախանա...>> (2-53):

Հուշագրության լեզվում առօրյա-խոսակցական ոճի հետաքրքիր արտահայտություններին են նաև **դարձվածքները**: Գերակշռում են ժողովրդական դարձվածքները, որոնք խոսքը դարձնում են սեղմ, տպավորիչ: Դրանք հիմնականում տեղին ու դիպուկ գործածություններ են ն՛ ոճական, ն՛ գեղագիտական ամուսնով: Սակայն կան նաև դարձվածքների անհաջող կիրառություններ, որոնք թուլացնում են խոսքի գեղարվեստականությունը, չեն նպաստում ասելիքի պատկերավոր արտահայտմանը: Օր.՝ <<... տեղի թերթերն ու հանդեսները, **բերնի ջրերը գնալով**, տպում էին նրալուսանկարը...>> (1-383-384):

խոսքային համապատասխան իրադրությունում, պայմանավորված նյութով ու նպատակադրումով, դարձվածքները գրողի գրչի տակ կրում են կառուցվածքային որոշակի փոփոխություններ: Օր.՝ օտարության մեջ ապրող հայ ծերուկների՝ մայրենի լեզվի կարոտը շեշտելու նպատակով գրողը **աքերից կախել** դարձվածքը փոխել է **շուրթերից կախ ընկնել** - ու. <<... շնչահատպետ է **կախընկած մնան** թոռնիկների **շուրթերից**՝ հայերեն մի բառ լսելու համար>> (2-27):

Բարբառային բառաշերտ Հուշագրություններում կան հերոսներ, որոնք գյուղական աշխարհի երբեմնի բնակիչներ են: Նրանց խոսքը գրողը երբեմն ոճավորում է բարբառային բառերով: Այսպես՝ վանեցի խոսրով թյուրթյուրնճյանի՝ գրողի ոչ հեռավոր հարազատների անցյալի կենսակերպը ներկայացնող վերհուշում բարբառային բառն ընդգծում է նաև հերոսի՝ հայրենի եզերքի հանդեպ անսահման կարոտը. <<- Պապ **սուկ կար** էր, շատ չարքաշ կարու էին>> (1-308):

Հեղինակի խոսքում գործածված բարբառային որոշ բառեր ստեղծում են գյուղական միջավայրի բներանգ, երբ գրողը նկարագրում է, օրինակ, այդ միջավայրում հայտնված

հերոսների հոգեվիճակը. <<Իսկ մենք ... գիշերը քուրդ գյուղահայերի տանը, քնապարկի մեջ, **բեգարած**, լուռ-**թախաբիթիների** հետ անօգուտ պայքարելով, լուսացնում>> (3-70):

Գրական միաբան համարժեքը չունեցող բարբառային որոշ բառերի գործածում - թյան ոճական նպատակը խոսքի սեղմուղյան ապահովումն է, միաժամանակ նաև ոճական այլ խնդիրների լուծումը: Այսպես՝ հատկապես Վանի բարբառին բնորոշ **տանտուն** (բակում մի առանձին տեղ, որտեղ գտնվում է թոնիրը, հաց են թխում, լվացք անում, կերակուր եփում⁸) բառը՝ բարբառային **չալ կջի** (նվագող) բառի հետ օտար շրջապատում ստեղծում է նաև հարազատ միջավայրի բնե-րանգ ու զգացողություն. <<... Նյու-Ջորսիի մի անկյունում ընկած ամերիկացի տունը դարձել է **տանտուն**՝ լցված <<**չալ կջիների**>> թաղեթաղ հասող երգ ու նվագով>> (2-202):

Բարբառային որոշ բառեր բնորոշվում են հուզարտահայտչական բովանդակությամբ՝ դրսևորելով գրողի վերաբերմունքը հերոսների նկատմամբ: Օր.՝ **սաղ-րիկ** բառն արտահայտում է գրողի սիրալիրությունն ու շավեն Սյուրմելյանի հանդեպ տածած շերմ զգացողությունը, իսկ **քուլ եցի** (սարեցի) բառն ընդգծում է իջե-վանցի Դավթյանի նկատմամբ ոչ դրական վերաբերմունքը. <<Նստած է՝ մեծ մասամբ լուռ, ինքն իր մեջ սուզված և շրջակա եռուզեռին... մասնակցում է միայն **սաղրիկ** մի ժպիտով>> (2-246), <<... դեմս կանգնած էր ասես հջևանի շամբ ու անտառներից նոր դուրս եկած **քուլ եցին**, անմշակ տեսք ու պահվածքով>> (3-22):

Վան բարբառային բառերի անհարկի գործածություններ, որոնք համապատասխան խոսքաշարերում չեն նպաստում ոճական որոշակի խնդիրների լուծմանը: Օր.՝ <<Արայիկը ... **խոմոս** վրաս>> (3-178), <<Հա՛մախորդներն էլ **բեգարած**, բանվորական արտահագուստով արարներ>> (3-316):

Արևմտահայ երեն բառաշար Գրողի խոսքարվեստում բառապաշարի այս շերտը ոճական տարբեր գործառույթներ կատարելու առումով այնքան էլ չի արժե-վորվում: Հուշագրության նյութով պայմանավորված՝ գրողն այս բառաշարից օգտվում է թերևս օտար միջավայրում ներկայացվող արևմտահայ իրականու-թյան պատկեր ստեղծելու, այդ իրականության զգացողությունը պահպանելու ու փոխանցելու, խոսքն ավելի կենդանի, բնական դարձնելու նպատակով. <<Ծո-վափնյա **լայ նշի** մայրուղին լցված է եռուզեռով>> (1-54), <<... դուրս եմ գալիս <<Կապիտոլից>>՝ օղակայան տանող **ինքնաշարժ** նստելու համար>> (1-281): **Օտարաբանություններ:** Հուշագրության նյութում ներկայացվող

⁸ Բարբառային բառերի բացատրությունները տրվում են ըստ <<Հայ ոց լեզվի բարբառային բառարան>>-ի, Ե., հ. 1-6, 2001-2010:

օտար միջավայրը լայն հնարավորություն է տվել օտար բառերի գործածության համար: Այդ միջավայրի համապատասխան երանգ են ստեղծում մի շարք օտարաբանություններ. «Օրվա **սիկ** ժամն էր...» (4-580), «Որոշված օրը Ալիսն իր ավտոմեքենան կանգնեցրեց «Նյու-Յորք-Յիլթոն»-ի մոտիկ **«սպրկիսգում»**...» (2-329):

Տարբեր՝ ամերիկյան, գերմանական, իտալական, եգիպտական միջավայրերի, այդ ժողովուրդների կյանքին, կենցաղին համապատասխան ազգային երանգավորում ստեղծելու նպատակով գրողը դիմում է նաև **փոխառյալ բառերի** գործածությանը: Այդ բառերը \$, էդ. դաթյանն անվանում է **ստրաջ խարհիկ բառեր**⁹, էդ. Ադայանը՝ **հասկական փոխառություններ**¹⁰: նշելով, որ «դրանք ցույց են տալիս այս կամ այն երկրին հատուկ երևույթներ, այս կամ այն ժողովրդին հատուկ սովորույթներ, կենցաղային սովորույթներ, իրեր, արտադրանքներ»¹⁰: Դրանք ունեն գուտանվանողական արժեք. **կոկտեյլ-փարթի** (1-310), **կանցլեր** (3-39), **գոնդոլ**, **գեյշա** (4-562), **Ֆելլահ** (1-475):

Հուշագրության բառապաշարում առավել շատ են **ռուսերեն** կամ **ռուսերենի միջնորդությամբ** հայերենին անցած բառերը: Դրանք ընդգծում են հեղինակի՝ խոսքին անմիջական, ժողովրդական երանգ հաղորդելու ձգտումը, որը բխում է հուշագրությունների նյութից և հեղինակային նպատակադրումից: Կապուտիկ-յանի հուշագրության թեման օտարության գիրկն ընկած հայ ժողովուրդին է, որի լեզվամտածողությունը ինչ-ինչ չափով փոխվել է օտար լեզվի ազդեցությամբ, ուստի գործածում է այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ **ակցեսա** (1-27), **կոնկուրս** (2-71), **կազինո** (4-51), **սուվենիր** (3-285), **միկրոֆոն** (1-225), **սեզոն** (4-78) և այլն:

Այդ բառերով գրողը ոճավորում է նաև հերոսների խոսքը, այն դարձնում առավել բնական ու անմիջական: Օր.՝ «Հոգու նույն երթուղիներով» հուշագրության հերոսի՝ իջևանցի Դավթյանի խոսքը. «- Էս **րեմենը** կապել ա պետք, էստեղ շատ խիստ ա, եթե չկապենք, 40 մարկ **շտրաֆ** պիտի տանք» (3-23):

Հեղինակի խոսքում եվրոպական լեզուներից **ռուսերենի** միջնորդությամբ հայերենին անցած որոշ բառեր գիտական ոճի արտահայտություններ են: Հուշագրության որոշ հատվածներ հրապարակախոսական ոճի դրսևորումներ են. հիշյալ բառաշարի գործածությունը վերաբարձությունն է հաղորդում խոսքին, ուժեղացնում խոսքի ներգործությունը: Օր.՝ «... մենք ունենք թուրքիայի և Ադրբեյջանի պես հարևաններ, ունենք մեր հենց այդ

⁹ **\$, էդ. դաթյան**, Ռճարանական բառարան, Ե., 2000, էջ 159:

¹⁰ **Էդ. Ադայան**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 169: Այս բառերը հայտնի են նաև **Էկզոսիզմներ** անվանումով:

գեոպոլիտիկայով պայմանավորված երկարամյա ռուսական արևելում» (3-64):

Այս բառերի ոճական արժեքն ավելի է ընդգծվում, երբ գործածվում են ոչ համապատասխան ոլորտում՝ դրսևորելով գրողի հեգնանքը: Օր.՝ «Մնացած տասնհինգը հայ ընտանիքի հարսներ էին, կանադական ֆրանսուհիներ, որոնք, ամուսիններին ֆրանսերենով լիակատար **կապիտուլյացիայի** ենթարկելուց հետո, ուզում էին կեսուր-կեսարարին էլ հայ երենո՛վ գինաթափանել ...» (2-33):

Հայ կերպարների խոսքում օտարաբանություններն ունեն օտար միջավայրի՝ մայրենի լեզվի վրաթողած ազդեցությունը շեշտելու միտում: Օրինակ՝ Քերովբե Պտուկյանի խոսքում. «Կուզեք, Էրթանք **օֆիսը**, ձեզի երեք հազարի մոտ հայերու **դոսիե** կրնամ ցուցնել, ամենուն ալ ես Կանադաբերած եմ...» (2-119):

Հերոսի խոսքը ոճավորելով օտար բառերով՝ գրողը երբեմն նկատի է ունենում նրա ծագումը: Այսպես՝ թուրքահայ հերոսի՝ բժիշկ Գասպարյանի խոսքում համապատասխան լեզվից ընտրված բառերի գործածության ոճական նպատակը կերպարի հավաստիությունը հիմնավորելն ու նրա ազգային ակունքն ընդգծելն է. «Ատիկա **մուշտերիներուն և յափալ ամիշ** ընելու համար է... **օրթալ ըղը** հիվանդն է, որ զիյան կընե» (1-68) և «Գլուխնիդ **սարսըմիշ** կըլլա՞մ ...» (1-67):

Նորակամություններ: Հիմք ընդունելով բառարաններում գտնված բառա-մթերքը՝ կապուտիկյանական նորակամություններ ենք համարել բոլոր այն բառերը, որոնք չկան՝ ա) Ստ. Մալխասյանցի «Հայ երեն բացատրական բառարան»-ում (այսուհետև՝ ՀԲԲ, բ) Էդ. Աղայանի ԱՀԲԲ-ում, գ) Գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակած ԺՀԼԲԲ-ում, դ) Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարան»-ում (այսուհետև՝ ԱՀԼԲ), ե) ՀԲԲ-ում և ԱՀԼԲ-ում, իսկ ԱՀԲԲ-ում կամ ԺՀԼԲԲ-ում տրված են միայն Ս. Կապուտիկյանի ստեղծագործություններից քաղված օրինակներով:

Հեղինակային նոր բառերը կազմվել են ոճական տարբեր նպատակներով: Դր-

րանց գերակշիռ մասը իրավիճակները, առարկաներն ու երևույթները բնորոշում է հակիրճ և հիմնականում դիպածային բնույթ ունի: Գրողի նպատակը խոսքի սեղմության ապահովումն է՝ հանափ միտիությունված ոճական հավելյալ խնդիրներով լուծմամբ: Այսպես՝ խոսքի հակիրճությանը նպաստող որոշ նորաբառեր կազմվել են նաև տեղի, ժամանակի իմաստն ընդգծելու՝ **անդունդնեզրյա** ոլորան (2-337), **լողախային** կառույց (2-305), **ամենապահյա** հոլովում (4-359), **այ դորյա** տնօրեն (3-246), եզակի առարկան դիպուկ անվանելու՝ **մափսագրիչ** (3-100), ընդհանրական-հավաքական գաղափարը կարևորելու՝ **երկրագունդի** (2-412) ու՝ ճական նպատակներով: Դրանց մեծ մասը անբարեհունչ, գեղագիտական

առու - մով անհաջող կազմություներ են, թուլացնում են խոսքի արտահայտչականու - թյունն ու հուզական ներգործությունը. **չարչարաբարի** (3-291), **գայլահամ-բալ** (2-407), **խոժոռահամբալ** (2-190), **ալկոհոլաբույր** (2-330), **ակմբառեղ** (2-422), **աթոռաքար** (2-75), **սուազգեստ** (2-372), **տաղաչալի** (1-158) և այլն:

Ասելիքի տրամաբանական կապը պահպանելու նպատակով Կապուտիկյանը նոր բառեր է կերտել համագործակցության բառերի նմանողությամբ: Օր.՝ **կովա-խնձոր**, **կովածաղիկ** բառերի համաբանությամբ գրողը կազմել է **կովածամոն** նոր բառը, որի ստեղծման հիմքում երկու քույրերի կովի պատճառ դարձած ծամոնն էր. <<Երկու քույրերի միջև ծամոնը դարձել էր **կովածամոն**>> (4-293):

Նոր բառերի ստեղծման ոճական շարժառիթը հաճախ որոշակի վերաբեր-մունք, տվյալ դեպքում՝ հեգնանք արտահայտելն է: Օր.՝ <<Սեմի մեջ հանկարծ ցայտքեր է տալիս խորքերում ծվարած <<**բիրդանաղայ ու թյունը**>>> (3-290):

Կապուտիկյանական որոշ նորակազմություններ ստեղծվել են աշխարհն ու երե-վոյ թները բանաստեղծական մտածողությամբ արտահայտելու, ձևավորված հույ-զը, զգացմունքը, ասորումը անհրաժեշտ նրբերանգով դրսևորելու նպատակով: Օր.՝ <<Անձրևոտ օր էր, գերեզմաններիս այցելության գնալու սգավոր ու **արցունքակաթ** օր>> (3-292), <<Յեռավոր երկրի **հեռաբույր** մի աշուն էր...>> (2-429):

Երկրորդ գլուխը վերնագրված է <<**Քերականական իրողություններ**>>: Այն բաղկացած է երկու ենթագլխից՝

Նախառություն կառուցվածքային տիպեր: Գրողի խոսքարվեստում տարածված **անվանական անդեմ նախառությունները** խոսքի բանաստեղծականու - թյունը պայմանավորող շարահյուսական միջոցներից են: Կապուտիկյանը այցե-լած տարբեր վայրերի տեսողական պատրանքը ստեղծում է այնպիսի միանդամ անդեմ նախառություններով, որոնց գլխավոր անդամները տեղանուններ են. <<**Փարիզ**>> (1-503), <<**Նիագարա**>> (2-23), <<**Բեյրութ**>> (1-501) և այլն:

Բազմանդամ կառույցները սեղմ ու հակիրճ են արտահայտում գրողի հոգեկան ասորումները, խհերն ու մտորումները, որոնք առնչվում են ոչ ինքնակամ օտա-րության մեջ ասորող սփյուռքահայերին: Օր.՝ ալեկոծվում է գրողի ներաշխարհը, երբ կարդում է Մելքոնյան կրթական հաստատությունում երբևէ հանդիպած Մե-լիսե Պապովյանի նամակը. <<**Նորից մի նամակ, Սփյուռքի տվյալ, փո-թորկվող, խռովված հոգիների հառու մները խառնող մի ուրիշ վավերա-թուղթ**>> (4-630):

Խոսքի արտահայտչականությունը պայմանավորված է նաև **թերի՝ դիմալոր բայի լրիվ կամ մասնակի զեղչում ու նեցող** կառույցներով. <<**Այնուհետև՝ նո-րից լուրջ ուն՝ այս անգամ արդեն զարմանալի**>> (2-46), <<Նրան նայելիս ... քո

տրամադրու թյ ու ն ն էլ է բացվում, **ամսերի խառն թյ ու նը՝
Նոսրանում**>> (3-96):

Հայ բնասաիրական խոհերում բանաստեղծական խոսքի արժեք ու ն են հանգույ -

ցի, ստորոգյալի գեղջմամբ ձևավորված բազմաբաղադրիչ կառույցները, որոնք

բանաստեղծ Կասրուտիկյանի լեզվամտածողության ուրույն դրսևորումներից են: Արձակ տողերի ներքին հանգավորումը խոսքը դարձնում է ռիթմիկ, բարեհունչ: Օր.՝ <<**Մի տեղ՝ թանկագին մարդիկ, մի այլ տեղ՝ թանկագին շիրիմներ, մի ուրիշ տեղ՝ թանկագին հիշատակներ, - ու բոլորն էլ ցրված, ցվրված, բոլորն էլ՝ սրտի կարոտ, սրտից մառ ու մասնիկ վերցնող...**>> (2-277-278):

Հուշագրության լեզվում **գեղջված ենթակայ ով** նախադասության ներքին բազմաթիվ դրսևորումներն առավել բնորոշ են ժողովրդական խոսքին: Դրանք սեղմ խոսքի հնչեղանի արտահայտության ներքին են. <<**Նստում եմ**>> (1-170), <<**Գրկա- խառնվում ենք**>> (2-276), <<**Ժպտացի. մերոնցից են...**>> (1-10):

խոսքին մտերմիկ երանգ են հաղորդում **Էական բայ ով արտահայտված ստորոգյալ** ու նեցող կառույցները: Դրանք, ըստ Ռ. Իշխանյանի, երկկազմ նախադասության ներքին ձևավորված ենթակա և Էական բայ ով արտահայտված ստորոգյալ հարաբերության ամբ¹¹. <<**Մերոնք են**>> (4-197), <<**Բեաթրիսն է...**>> (1-59):

Բարբառային և արևմտահայերեն քերականական իրողության ու ներքին: Հերոսներ- ռի խոսքում բարբառային քերականական իրողության ու ներքին նպաստում են նրանց խոսքի անհատականացմանը: Հեղինակի խոսքում գործածված բարբառային և արևմտահայերեն տարրերը ներդաշնակում են վանեցիների լեզվամտածողությանը, հուշագրության թեմային, խոսքը դարձնում են առավել կենդանի. <<... վանեցի մայրիկս իր ծննդյան օրը համատեղել է կանանց միջագային տո- նին, երևի մտածելով, որ այդպես <<**համ էժան ի, համ սպառվալոր ի**>>... >> (2-17), <<Առաջին մոտեցողը ... պետք է տար <<**կոկիկ գումար մը**>>...>> (2-214):

Հերոսներին տիպականացնելու նպատակով գրողը երբեմն գործածում է նրանց ուղղակի խոսքից վերցված բարբառային, արևմտահայերեն տարրեր. <<... օ- ռիորդ Նինան, գործի դնելով պարսկահայի իր ողջ քնքշախոսությանը, <<**ղուր- բանդ էլ նեմերն**>> և <<**Հան ու շիգարները**>>, հաջողեցրեց, որպեսզի ... Նո- րայրը իր ավտոմեքենայով կանգնի մեր դռանը...>> (3-10), <<խորենիկն էր, նա, որ <<**առավոտկերթար, իրիկուն կուգար**>>> (3-37): Երբեմն դրանք գործած- ված են հերոսի մտքի տարրը

¹¹ Տե՛ս Ռ. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսության ու ն, Պարզ նախադասության ու ն, Ե., 1986, էջ 304:

ծխտելու նպատակով. <<Որպեսզի ցույց տամ, որ ես <<**Փարիզ քանի մը օրով եկող չսես**>> չեմ ... անտարբեր մի հայացք եմ նետում թատրոնի մուտքին փակցրած կիսամերկ ֆոտոպարու հիներին>> (1-16):

Երրորդ գլուխը վերնագրված է <<**Պարկերալորման և արտահայտչական համակարգ**>>: Այն կազմված է երկու ենթազվից՝ <<**Պարկերալորման միջոցներ**>> և <<**Արտահայտչական միջոցներ**>>:

<<Պարկերալորման միջոցներ>>: Փոխաբերություն: Ս. Կապուտիկյանի գեղարվեստական ինքնատիպ մտածելակերպն իր լեզվական յուրօրինակ արտահայտությունն է գտել հուշապատումների էջերում սփռված բազմաբնույթ փոխաբերություններում: Դրանք խոսքին հաղորդում են հուզական-զգայական լիցք: Օր.՝ <<Նեղոսով **հոսում է** մուգ, թանձր մի տիրություն, և շրջակա բազմահարկ լույսերը **խեղդվել-օրորվում են** այդ թանձրության մեջ: Գետափնյա սալ ահատակին **կաթկթում են** երեք գույգ տարտամ ոտնածայներ>> (1-449):

Փոխաբերությունների գանազան դրսևորումներ ասելիքը ոչ այնքան պատկերավոր, որքան այլաբանորեն ներկայացնող ինքնատիպ միջոցներ են. <<... մեր սքանչելի արևմտահայերենը՝ գոնե Արևմտյան Սփյուռքում, **դառնում է ցաւ հանջ մի նամակ, որը արհամարհանք չունենալով, մտում է փոստառան դարակներում...**>> (4-9), <<Վլադիմիր Կրիկունովը ... **երկար չմնաց իր կեղևի մեջ՝ արագ կոտրեց ու դուրս արծալ...**>> (4-588):

ՅԵԳՆԱՆԷ: Գրողի հուշագրական արձակում գերիշխում են հեգնանքի այնպիսի դրսևորումները, որոնք մեղմ են, թույլ, ոչ այնքան բացասական (ծաղրական), առավել հումորային երանգավորում ունեն և մի տեսակ թեթևություն են հաղորդում խոսքին: Օր.՝ գրողը հեգնաբար է գործածում **դուեստ** բառը՝ բնորոշելով պարոն Թաթոսյանի խմբիցը. <<... ննջարանի կիսախավարից բասի և կոնտրալտոյի ռիթմիկ ներդաշնակությամբ երկծայն մի խմբից է գալիս... Վերջապես պարոն Թաթոսյանը ընդհատում է **դուեստը** և աչքերը բացում>> (2-303):

ԱՆՁՆԱՎՈՐՈՒՄ: Գրողի նախընտրած ոճական հնարներից է: Կապուտիկյանը շունչ ու շարժում է հաղորդում առարկաներին, որի շնորհիվ խոսքը դառնում է առավել ներգործուն ու զգացմունքային. <<... դեպի Ծիծեռնակաբերդ **էին շարժվում** Սումգայի թում գոհվածների խոշորացված սևերիզ դիմանկարները: **Նայում էին** աշխարհին **սխուր, գարմացած, ոչինչ չհասկանալով**>> (3-34):

Անձնավորման միջոցով գրողը ստեղծում է մտերմիկ, հոգեհարազատ միջավայրի կենդանի պատկերներ. <<Եղվարդի իմ սենյակը ինձ **դիմալորեց** գյուղի մարդու պարզաջերմությամբ ... և ամիսներ ի վեր **աչքը փակ** սենյակը միանգամից **զարթնեց, կենդանացավ**, պատերից, անկյուններից

կարոտով ինձ ընդ- առաջ ել ան նկարները, գրապահարանները, վարագույրները...» (2-6):

ՓՈՒԱՆՈՒՄԻՆՈՒԹՅՈՒՆ: Հուշագրությունում գործածված փոխանունությունների գգալի մասը ամանձնակի տպավորությունն չի գործում, հաճախ մնում է աննկատ և հիմնականում նպաստում է խոսքի սեղմությունը: Սակավաթիվ փոխանունությունների պատկերավորման հիմքում ամարկաների, երևույթների միջև նոր ու անսպասելի հարաբերությունների բացահայտումն է: Օր.՝ <<Դիմացիս **ակնոցը** սկսեց ինչ -որ կիսածայն մրմնջալ >> (1-10):

Մասնագիտական գրականության մեջ փոխանունություն մի տեսակ է ներկայացվում **համընկալ ու մը** կամ **համըմբռնումը**¹², որի լայն դրսևորումներով է բնորոշվում գրողի խոսքարվեստը: Կապուտիկյանի ինքնատիպ լեզվամտածողությունն արտահայտություններ են համըմբռնման այնպիսի դրսևորումները, որոնք խոսքում են օտար վայրերի պատկերները, տալիս են տարբեր ազդերի ներկայացուցիչների հավաքական նկարագիրը. <<Ես նույնպես վայրկենապես անջատվում եմ ... **օթո-րու թերից** ու **դովիլ ներից**, **ռուաններից** ու **սեն-միշել ներից** և նո-րից ու նորից <<հոգուս մեջ ամեն ճեղք լցնում >>, թանձրանում է միայն մի գույն, մի ձայն, մի տաճար՝ իմ ժողովուրդը...» (4-57-58), <<... տարօրինակ էր զանա-զան **ջիմեր** և **սեմերի** մեջ հանդիպել մեր Գրիշային...» (2-263):

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ: Համեմատությունների բազմաթիվ դրսևորումներում գրողի ոճական միտումը թանձրացականացումն է՝ ամալել տեսանելի ու տպավորիչ պատկերների ստեղծումը: Գրողի խոսքարվեստում գերիշխող **եռանդամ համե- մատությունների** ոճական դերը մեծ է հերոսների բնութագրություններում: Կապուտիկյանի ինքնատիպ լեզվամտածողության դրսևորումներ են այն համեմատությունները, որոնց եզրերից մեկում հերոսն է, մյուսում՝ նրա զբաղմունքը խորհրդանշող ամարկան: Օր.՝ <<Հիմա գորգավաճառ է ու ... **գորգի պես փա- փուկ** սիրտ ունի >> (2-25), <<Ինքն էլ **իր նվագի պես լ ուրջ է**...» (4-242):

Գրողը հաճախ է համեմատության եզր ընտրում աստվածաշնչյան բառապաշարից մի արտահայտություն, մի դրվագ, որը թերևս պայմանավորված է Սուրբ գրքին ծանոթ լինելու հանգամանքով: Աստվածաշունչը ամենաշատ ընթերցված գիրքն է, քաջածանոթ է բոլորին: Հետևաբար աստվածաշնչյան իրողությունների հետ համեմատությունները ձևավորում են ամալելի հայտնի պատկերներ, խոսքը դարձնում են ավելի ազդեցիկ ու ներգործուն: Օր.՝ <<... ծերունին մրմնջում է արտասահմանյան

¹² Տե՛ս Գ. Розенталь, Практическая стилистика русского языка, М., 1977, էջ 43, **А. Моро- ховский, О. Воробьева, Н. Лихомерст, З. Тимошенко**, Стилистика английского языка, М., 1991, էջ 170, **Լ. Եզեկյան**, Ոճագիտություն, Ե., 2003, էջ 359:

հրաժեշտների ժամանակ <<**Հայր մերի**>> **աֆս կրկնվող** բառերը՝ <<Հայաստանին բարև՝ տարեք>>...>> (2-67):

Գրողի խոսքարվեստում առանձնահատուկ տեղ ունեն այն համեմատությունները, որոնց համեմատության եզրում գյուղական կենցաղի առարկաներ են: Համեմատելի առարկայի այսպիսի ընտրությունը թերևս պատճառաբանված է նրա նով, որ գրողը ներկայացնում է գյուղական միջավայր՝ ստեղծելով գյուղաշխարհի իրական պատկեր: Օր.՝ <<Խճանկար հոգուն և քարտեզի գույներին>> գրքի այն հատվածում, որում ներկայացվող միջավայրը Չանգակատունն է. <<Այս թախտը, այս մայրը՝ գլխաշորը մինչև հիմա էլ բերնին քաշած, **մի բուն խանձած հողի նմանվող** մայրը, այս արևահար, **արքադի աֆս ցամքած ու ոստոտ** գյուղացի-ները, - ինչպե՞ս է այս բոլորին ծնվել Պարույր Սևակ...>> (2-401):

Նույնաբնույթ այլ համեմատություններ թեև ստեղծում են տապալորիչ նկարագրություններ, մի պահ նաև գյուղական միջավայրի պատրանք, սակայն անորոշ է մնում հեղինակի ոճական նպատակադրումը: Դրանք թերևս կամ գրողի ժողովրդական լեզվամտածողության, գյուղաշխարհին հարագատմնալու արտահայտություններ են, կամ պարզապես երևույթը դիպուկ ներկայացնելու՝ գրողի կողմից առավել նախընտրելի համեմատական եզրեր: Օր.՝ <<... **սարն ի վեր բարձրացող հին ու միայնակ սայլի աֆս ճռնչալով**, առաջ է գնում արարողությունը>> (3-51):

Երկանդամ համեմատությունների միջոցով գրողը ստեղծում է օտար միջավայր -

րի և հայկական բնաշխարհի գուգադիր պատկերներ: Օր.՝ <<Աջ կողմում ժայռե-դեն լեռներն են, հարևան **նման մեր Գառնու լեռու ձորին**>> (3-354):

